ԲԱԺԻՆ II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Պայմանագիր.** Կողմերի միջև կնքված Վարկային Պայմանագիրը, որի կազմում են Բաժին 1-ը՝ Հատուկ Պայմանները և Բաժին 2-ը՝ Ընդհանուր Պայմանները, ինչպես նաև դրանց ցանկացած փոփոխություններ և/կամ հավելվածներ
2. **Կողմ/եր.** Վարկառու և/կամ Վարկատու
3. **Վարկային գծի սահմանաչափ.** Բաժին 1-ում սահմանված Վարկի գումարի սահմանաչափ, որի սահմաններում Վարկառուն կարող է հայտեր ներկայացնել Վարկի տրամադրման համար
4. **Հնարավոր վարկային գծի սահմանչափ**. Բաժին 1-ով սահմանված Վարկի գումարի սահմանաչափ, մինչև որը Վարկային գծի սահմանաչափը կարող է աճել Վարկատուի հայեցողությամբ
5. **Հայտ.** Պայմանագրի համաձայն Վարկային գծի սահմանաչափի շրջանակներում Վարկ ստանալու դիմում, որը ներկայացվում է Վարկառուի կողմից Պայմանագրով սահմանված կարգով
6. **Վարկ.** Պայմանագրի համաձայն Վարկառուին տրամադրվող դրամական միջոցներ (վարկ)
7. **Հատկացված վարկի գումար.** Պայմանագրի համաձայն Վարկառուին փաստացի տրամադրված Վարկ, մասնավորապես՝ Բաժին 1-ում նշված գումար, որը Պայմանագիրը ստորագրելիս կամ դրանից հետո տրամադրվում է Վարկառուին կամ Վարկային գծի սահմանաչափի սահմաններում Հայտերի հիման վրա Վարկառուին տրամադրված Վարկ
8. **Պայմանագրային վճարներ.** Պայմանագրի համաձայն Վարկի տրամադրման, սպասարկման կամ լրացուցիչ ծառայությունների հետ կապված սահմանված վճարներ, ներառյալ՝ տոկոսներ, տույժեր և այլ վճարներ
9. **Տարեկան Տոկոսադրույք.** Վարկի տրամադրման դիմաց վճարման ենթակա տոկոսադրույքներ, որոնք սահմանված են Բաժին 1–ով
10. **Տրամադրման վճար.** Վարկի ձևակերպման դիմաց վճարման ենթակա վճար, որը սահմանված է Բաժին 1-ով
11. **Տարեկան փաստացի տոկոսադրույք** ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստացի տարեկան տոկոսադրույք Պայմանագրի համաձայն տրամադրվող Վարկ(եր)ի համար, որը նշված է Բաժին 1-ում
12. **Ժամկետանց վճարման տույժ.** Վճարման ժամկետի խախտման դեպքում վճարման ենթակա տույժ (տոկոս), որը սահմանված է Բաժին 1-ով
13. **Վճարման ժամկետ.** Մինչև վճարման օրը, իսկ Հետաձգման դեպքում՝ մինչ Հետաձգման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածը
14. **Վճարման օր.** Բաժին 1–ով սահմանված վճարման օրը, մինչև երբ Վարկառուն պետք է կատարի Վարկի գումարի ամբողջական մարում
15. **Հետաձգման ժամկետ**. Բաժին 1–ով սահմանված Վարկի գումարի մարման Հետաձգման ժամկետ(ներ), որոնք տարբեր են կախված Հետաձգման վճարի չափից և որոնք հաշվարկվում է Վճարման օրվանից
16. **Հետաձգման վճար.** Բաժին 1–ով սահմանված Հետաձգման վճար(ներ)՝ Վարկի ժամկետի հետաձգման համար
17. **Վարկատուի հաշիվ.** Բաժին 1–ում սահմանված Վարկատուի ցանկացած բանկային հաշիվ

18. **Վարկառուի հաշիվ.** Վարկառուի՝ Պայմանագրում նշված, Մասնաճյուղում հայտնած ցանկացած ընթացիկ բանկային հաշիվ կամ Վարկառուի ցանկացած ընթացիկ բանկային հաշիվ, որից վերջինս երբևէ փոխանցում է կատարել Վարկատուին
19. **Վարկառուի էլ-փոստ.** Պայմանագրում նշված Վարկառուի էլեկտրոնային փոստի հասցե, որի միակ օգտատերը Վարկառուն է
20. **Հեռախոսահամար.** Պայմանագրում, Պրոֆիլում և/կամ Մասնաճյուղում նշված ցանկացած հեռախոսահամար, որի միակ օգտատերը Վարկառուն է
21. **Պորտալ**. Վարկատուի կայք (այս պահին www.varks.am դոմենի անվամբ), որտեղ Վարկառուն անհատականացվում է Պրոֆիլի միջոցով և որտեղ տեղի է ունենում Կողմերի միջև փոխադարձ հաղորդակցությունը և տեղեկությունների փոխանակումը
22. **Պրոֆիլ.** Պորտալում Վարկառուի անձնական էջ, որը հասանելի է Վարկառուի էլ-փոստը և գաղտնաբառը մոտք անելուց հետո
23. **Մասնաճյուղ.** Վարկատուի ցանկացած մասնաճյուղ (գործող ցուցակը հասանելի է Պորտալում)
24. **Օրենք.** «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենք

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

25. Սույն վարկային գծի պայմանագիրը կնքվում է 5 (հինգ) տարի ժամկետով: Մինչ պայմանագրի ժամկետի ավարտը Կողմերից որևէ մեկի կողմից Պայմանագրի դադարման վերաբերյալ մյուս կողմին չծանուցելու դեպքում Պայմանագիրը համարվում է նույն պայմաններով և նույն ժամկետով վերակնքված յուրաքանչյուր անգամ:
26. Պայմանագրով Վարկատուն Վարկային գծի սահմանաչափի սահմաններում տրամադրում է Վարկ(եր) Վարկառուին՝ վերջինիս Հայտ(եր)ի հիման վրա և դրանց բավարարման դեպքում, իսկ Վարկառուն պարտավորվում է վերադարձնել փաստացի ստացված Վարկը (Հատկացված վարկի գումարը) և դրա դիմաց վճարել տոկոսներ, ինչպես նաև Պայմանագրային այլ վճարներ: Պայմանագրի երկկողմ ստորագրման դեպքում Բաժին 1-ում Հատկացված վարկի գումարի լրացման (նշման) դեպքում նշված չափով Վարկը տրամադրվում է Պայմանագրի համաձայն՝ առանց լրացուցիչ Հայտի ներկայացման և բավարարման

27. Վարկառուն Հայտը կարող է ներկայացնել Մասնաճյուղում, ինչպես նաև հեռախոսազանգի կամ Պորտալի միջոցով՝ ստորև ներկայացված կարգով: Ընդ որում Հայտի ձևը կարող է ստորագրվել Վարկային պայմանագրի Բաժին 1՝ Հատուկ պայմանների կամ Պայմանագրի լրացուցիչ համաձայնագրի նախագիծը Վարկառուի կողմից միակողմանի ստորագրելու միջոցով, որի պարագայում մինչ երկկողմ ստորագրումը (հաստատումը Վարկատուի կողմից) նշված փաստաթղթերը կարող են Պայմանագրի իմաստով դիտարկվել որպես Հայտ:

    Վարկատուն միակողմանի որոշում է հայտի բավարարման կամ մերժման հարցը՝ հաշվի առնելով իր կողմից կատարվող Վարկառուի վարկունակության (վճարունակության) գնահատումը

28. Հեռախոսազանգի միջոցով Վարկառուն իրավունք ունի Հայտ տալ բացառապես Հեռախոսահամարից՝ նշելով իր անուն, հայրանուն, ազգանունը, Պայմանագրի համարը և Վարկի գումարը, որն ակնկալում է ստանալ Վարկային գծի սահմանաչափի սահմաններում, ինչպես նաև Վճարման օրը և Ձևը:

29. Պորտալում Պրոֆիլի միջոցով Վարկառուն լրացնում է Հայտի ձև և էլեկտրոնային եղանակով ներկայացնում Հայտը:

30. Աշխատանքային ժամերին հայտի ստացումից հետո 25 րոպեի ընթացքում Վարկատուն տեղեկացնում է Վարկառուին Հայտի բավարարման կամ մերժման մասին՝ Մասնաճյուղում, կրկնվող վարկի դեպքում նաև Հեռախոսազանգով կամ Պորտալում Պրոֆիլի միջոցով: Հայտի Բավարարման դեպքում Վարկառուի էլ-փոստին ուղարկվում է Հայտի համաձայն Վարկի տրամադրման հետևանքով Բաժին 1-ում կատարված փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտնում Վարկի փաստացի տրամադրման պահից: Վարկառուն գիտակցում է, որ նման փոփոխությունները կատարվում են իր կողմից Հայտ տալու հետևանքով և համաձայնվում է դրանց կատարմանը սույն կետով սահմանված կարգով՝ առանց լրացուցիչ համաձայնեցման կամ փաստաթղթերի ստորագրման: Վարկառուի պահանջով Վարկատուն պարտավոր է Մասնաճյուղում տրամադրել փոփոխված Բաժին 1-ի թղթային տարբերակը, որի օրինակը տրամադրվում է Վարկառուին դրա երկկողմ ստորագրումից հետո: Անկախ սույն կետում նշված կարգավորումից Հայտի բավարարումը կարող է հաստատվել Կողմերի միջև փոփոխված Բաժին 1-ի կամ համաձայնագրի ստորագրման միջոցով՝ առանց Վարկառուի էլ-փոստին փոփոխությունների ուղարկման:

31. Վարկատուն Վարկառուի ցանկությամբ պետք է տրամադրի յուրաքանչյուր Վարկի գումարը կանխիկ Մասնաճյուղում կամ փոխանցի այն Վարկառուի հաշվին: Վարկառուի կողմից Կանխիկի տրամադրման վճարը չվճարելու դեպքում Վարկատուն Վարկի գումարը փոխանցում է Վարկառուի հաշվին: Վարկառուի հաշվին Վարկի գումարը փոխանցելու դեպքում Վարկը համարվում է տրամադրված Վարկառուի կողմից բանկային փոխանցում կատարելու օրը:

32. Վարկը տրամադրվում է Վարկառուին Պայմանագրի ստորագրումից (Հատկացված վարկի գումար նշվելու դեպքում) կամ Հայտի բավարարումից հետո 14 (տասնչորս) օրացույցային օրվա ընթացքում, իսկ Անհապաղ տրամադրման վճարը Վարկառուի կողմից վճարվելու դեպքում՝ Մասնաճյուղ ներկայանալու օրը անհապաղ կամ բանկային փոխանցմամբ մինչև 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում, որը սույն Պայմանագրի իմաստով համարվում է անհապաղ տրամադրում: Վարկառուն Պայմանագրի շրջանակներում Վարկատուին վճարումներ կատարում է բացառապես Վարկի գումարը փաստացի տրամադրվելու դեպքում՝ Հատկացված վարկի գումարի համար:

33. Պայմանագրային վճարումները կարող են կատարվել կանխիկ Մասնաճյուղում կամ Վարկատուի հաշվեհամարին բանկային փոխանցման կամ վճարման այլ միջոցներով, նշելով վճարման մանրամասները 1) Հետաձգման դեպքում՝ Հետաձգում, Պայմանագրի համարը, կամ 2) Այլ պայմանագրային վճարումների դեպքում՝ Պայմանագրի համարը:

34. Վարկի գումարի մարումից հետո Վարկառուն իրավունք ունի անսահմանափակ նոր հայտեր տալ՝ պայմանով, որ փաստացի տրամադրվող Վարկերի գումարը չգերազանցի Վարկային գծի սահմանաչափը:

ՏՈԿՈՍՆԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ

35. Պայմանագրի համաձայն գործում են հետևյալ Պայմանագրային վճարները՝

Հիմնական վճարներ.

- Տոկոս, որը վճարվում է Վարկի դիմաց Տարեկան տոկոսադրույքին համապատասխան
- Տրամադրման վճար, որը միանվագ վճարվում է Վարկի ձևակերպման դիմաց
- Ժամկետանց վճարման տույժ, որը վճարվում է վճարման ժամկետի խախտման դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա դիմաց

Լրացուցիչ վճարներ.

- Հետաձգման վճար, որը վճարվում է Վարկի ժամկետի հետաձգման համար
- Կանխիկի տրամադրման վճար, որը վճարվում է Վարկը կանխիկ ստանալու համար

Անհապաղ տրամադրման վճար, որը վճարվում է Վարկի գումարն անհապաղ տրամադրման համար

36. Վարկառուն պետք է Վարկատուին վճարի տոկոսներ և Տրամադրման վճարը Հատկացված Վարկի գումարի դիմաց: Տոկոսը պետք է հաշվարկվի տոկոսադրույքերին համապատասխան՝ հաշվարկի համար սահմանելով, որ տարին կազմված է 360 օրվանից:

37. Լրացուցիչ վճարները վճարվում են բացառապես Վարկառուի ընտրությամբ և ցանկությամբ դրանցով պայմանավորված լրացուցիչ ծառայություններ (արդյունք) ստանալու համար և դրանցով պայմանավորված չէ Վարկի տրամադրումը: Կանխիկի տրամադրման և Անհապաղ տրամադրման վճարները վճարվում են մինչ Վարկի տրամադրումը:

38. Վարկատուն կարող է ցանկացած ժամանակ փոխել վճարների չափերը (ներառյալ տոկոսների և տույժերի), վերջինիս նոր չափերը հրապարակելով Պորտալում կամ Մասնաճյուղերում՝ համաձայն սակագնի: Վճարների չափերի փոփոխության հրապարակումից հետո Վարկառուի կողմից նոր Հայտ ներկայացնելու դեպքում նշված Վճարների չափերը համարվում են

համաձայնեցված և ընդունված Վարկառուի կողմից: Նշված փոփոխությունները չեն կիրառվում մինչ դրանց հրապարակումը Հատկացված վարկի գումարների նկատմամբ:

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

39. Վարկառուն պետք է կատարի Պայմանագրային վճարումները Վճարման ժամկետում Վարկատուի բանկային հաշվին փոխանցում կամ որևէ այլ եղանակով վճարում կատարելով կամ կանխիկ վճարելով Մասնաճյուղում:

40. Երբ Վարկառուն խախտում է Վճարման ժամկետը կիրառվում է Ժամկետանց վճարման տույժը ի լրումն մյուս Պայմանագրային վճարների: Նման դեպքում Ժամկետանց վճարման տույժը հաշվարկվում է, ինչպես Վարկի գումարի, այնպես էլ Տոկոսի և Տրամադրման վճարի պարտքի նկատմամբ:

41. Վարկառուն կարող է Հետաձգել Վարկի գումարի մարումը Հետաձգման ժամկետով՝ վճարելով Հետաձգման վճար: Բաժին 1-ով սահմանվում է Հետաձգման ժամկետները՝ ըստ վճարված Հետաձգման վճարների:

42. Եթե Վարկի Վճարման ժամկետը հետաձգվել է, ապա Վարկառուն Հետաձգման ժամկետի ընթացքում Վարկատուին վճարում է միայն Հետաձգման վճար, իսկ այլ Պայմանագրային վճարումները, ներառյալ Տոկոսները հետաձգվում (կասեցվում) են այդ ընթացքում և չեն հաշվարկվում Հետաձգման ժամկետի համար:

43. Վարկառուն ցանկացած ժամանակ իրավունք ունի ժամկետից շուտ մասնակի կամ ամբողջությամբ մարելու (վերադարձնելու) Վարկի գումարը և կատարելու Պայմանագրային վճարումներ՝ համաձայն Օրենքի:

44. Վարկի գումարի վաղաժամկետ մարման դեպքում Վարկատուն պետք է հետ վճարի փաստացի չօգտագործված Վարկի գումարի մարման ժամկետի համար Վարկառուի կողմից նախապես վճարված Տոկոսները (առկայության դեպքում)՝ չօգտագործված ժամկետի համամասնությամբ: Նշված գումարը վճարվում է Վարկառուին վերջինիս գրավոր դիմումի հիման վրա:

45. Եթե Վարկատուն միակողմանիորեն հրաժարվում է Պայմանագրից, ապա Վարկառուն պետք է Պայմանագրային բոլոր վճարումները կատարի մինչև պարտավորությունների ամբողջական կատարումը:

46. Վարկառուի Պայմանագրային վճարումները համարվում են կատարված Վարկատուի կողմից դրանց ստանալու պահից: Պայմանագրի պայմաններին չհամապատասխանող Վարկառուի վճարումը չի համարվում ստացված մինչև դրա ճանաչումը: Վարկատուն կարող է սահմանել հաջորդականություն, որի ներքո պայմանագրային պարտավորությունները պետք է կատարվեն:

47. Կասկածներից խուսափելու համար Կողմերը սահմանում են, որ Վճարման ժամկետի խախտման կամ Պայմանագրի դադարման դեպքում Վարկառուն պարտավորվում է վերադրաձնել Հատկացված վարկի գումարը և վճարել կիրառելի Պայմանագրային վճարները, բացառությամբ Պայմանագրով և Օրենքով սահմանված դեպքերի:

ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

48. Վարկառուն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ համաձայն Օրենքի: Նման դեպքում Վարկառուն պարտավոր է մարել (վերադարձնել) Հատկացված վարկը և վճարել Վարկի փաստացի տոկոսադրույքը՝ Հատկացված վարկի գումարի փաստացի օգտագործման ժամանակահատվածի համար: Վարկառուն սույն կետում նշված իրավունքից օգտվելու համար ներկայացնում է Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ գրավոր ծանուցում Վարկատուին՝ նշելով իր անունը, ազգանունը և Պայմանագրի համարը: Նման ծանուցման բացակայության դեպքում Պայմանագիրը չի համարվում լուծված:

49. Մասնաճյուղից՝ Հեռախոսահամարից զանգելու, կամ Պորտալում՝ Պրոֆիլի միջոցով, Վարկառուն կարող է անվճար տեղեկություններ ստանալ իր պայմանագրային պարտավորությունների վերաբերյալ: Եթե Վարկառուն ուշացնում է պայմանագրային վճարումների կատարումը Վարկատուն կարող է հիշեցում(ներ) ուղարկել Վարկառուին փոստով, Հեռախոսահամարին զանգելով, հաղորդագրություն ուղարկելով, Պորտալում Պրոֆիլի միջոցով կամ ցանկացած այլ ձևով:

50. Վարկառուի դիմումի հիման վրա կամ Վարկատուի նախաձեռնությամբ Վարկային գծի սահմանաչափը կարող է ավելանալ Հնարավոր Վարկային գծի սահմանաչափի սահմաններում Վարկատուի կողմից Վարկառուի (վարկունակության) վճարունակության գնահատման միջոցով: Վարկատուն կարող է չավելացնել Վարկային գծի սահմանաչափը կամ պակասեցնել այն, եթե Վարկատուի կարծիքով Վարկառուի վճարունակությունը փոխվել է: Վարկային գծի սահմանաչափի փոփոխությունը կատարվում է Վարկատուի կողմից միակողմանիորեն և չի կարող ազդել Հատկացված վարկի գումարի կամ դրա մարման պայմանների վրա:

51. Վարկատուն կարող է հրաժարվել Պայմանագրից և պահանջել Վարկառուից պարտավորությունների վաղաժամկետ կատարում, եթե 1) Վարկառուն տրամադրել է կեղծ տվյալներ, տեղեկություններ կամ փաստաթղթեր, 2) Վարկառուն խախտել է վճարման ժամկետներն ավելի քան 7 օրով, 3) Վարկառուն խախտել է Պայմանագրով սահմանված իր որևէ այլ պարտավորություն, 4) նշանակալից հանգամանքներ փոխվել են, որոնք հանդիսացել են Պայմանագրի կնքման հիմք, 5) Վարկառուի դեմ դատարան հայց է ներկայացվել, նրա նկատմամբ հարուցվել է քրեական գործ կամ

ներկայացվել է նրան սնանկ ճանաչելու դիմում, 6) Պայմանագրի դադարման, այդ թվում՝ միակողմանի լուծման դեպքում:

52. Վարկառուն սույնով համաձայնում է, որ 1) Վարկատուն իրավունք ունի սույն Պայմանագրից բխող պահանջները փոխանցել ցանկացած երրորդ անձանց (ցեսիոնարներ) 2) ցեսիոնարները հետագայում իրավունք կունենան այդ պահանջները փոխանցել անսահմանափակ թվով երրորդ անձանց 3) Վարկատուն և ցեսիոնարներն իրավունք ունեն երրորդ անձանց բացահայտել սույն Պայմանագրի կնքման համար տրամադրված տեղեկությունները 4) Վարկատուն և երրորդ անձինք պարտավոր չեն Վարկառուին տեղեկացնել փոխանցման մասին, ուստի Վարկառուն պարտավոր է շարունակել կատարել Պայմանագրով սահմանված վճարումները Վարկատուին, ով պետք է գործի որպես նոր վարկատուների գործակալ, եթե Վարկատուն այլ կերպ չի ծանուցել Վարկառուին:

53. Վարկատուն իրավունք ունի ստեղծել Վարկառուի վարկային պատմությունը նրա պարտավորությունների վերաբերյալ և կարող է այդ տեղեկությունները տրամադրել Վարկառուի այլ վարկատուներին կամ նոր պարտատերերին (ցեսիոնարների), այդ թվում ապագա: Վարկատուի դիմումի հիման վրա Վարկառուն պետք է 7 օրվա ընթացում տրամադրի փաստաթղթեր վերջին 6 ամիսների եկամուտների և ծախսերի վերաբերյալ:

ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

54. Վարկառուն պետք է ծանուցի Վարկատուին Պայմանագրում նշված իր տվյալների, անձը հաստատող փաստաթղթի կամ աշխատավայրի փոփոխության մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում Հեռախոսահամարից զանգելու, Պորտալում Պրոֆիլի միջոցով կամ Մասնաճյուղում:

55. Վարկատուն կարող է պահանջել Վարկառուին հաստատել տվյալների փոփոխությունը հեռախոսով՝ Հեռախոսահամարի օգտագործմամբ կամ Պորտալում, Մասնաճյուղում կամ այլ կերպ: Մինչ այդ Վարկատուն կարող է չտրամադրել Վարկի գումարը կամ չհետաձգել Վարկի գումարի մարման ժամկետը: Վարկառուի հաշվի փոփոխությունը կատարվում է բացառապես Մասնաճյուղում՝ Վարկառուի ստորագրությամբ:

56. Վարկառուի անհատականացումը կամ նրա հետ հեռախոսով հաղորդակցությունը պարտավորեցնող է Կողմերի համար, եթե հեռախոսային խոսակցությունը տեղի է ունեցել Հեռախոսահամարի օգտագործմամբ և դրա ընթացքում Վարկառուն տրամադրել է Պայմանագրի վերաբերյալ Վարկատուի կողմից պահանջվող տվյալները: Վարկատուն պետք է ձայնագրի նման հեռախոսային խոսակցությունները:

57. Վարկառուն Պայմանագրի ստորագրումից հետո իրավունք ունի ստեղծել Պրոֆիլ՝ Պրոֆիլի կանոններով սահմանված կարգով: Վարկառուի

անհատականացումը և նրա հետ հաղորդակցությունը պարտադիր է Կողմերի համար, եթե Պրոֆիլի օգտագործման կանոնները հաստատվել են Վարկառուի կողմից Պորտալում գործող Պրոֆիլի ակտիվացման միջոցով (ակտիվացման պահից)՝ նշված կանոններով սահմանված կարգով: Պորտալի կանոնները հասանելի են Պորտալում և կազմում են Պայմանագրի անբաժանելի մասը:

58. Վարկատուն կարող է կասեցնել կամ դադարեցնել Վարկառուի անհատականացումը և/կամ իր հետ հաղորդակցությունը հեռախոսով՝ Հեռախոսահամարի օգտագործմամբ կամ Պորտալում Պրոֆիլի միջոցով և պահանջել, որ որոշակի գործողություններ կատարվեն բացառապես Մասնաճյուղում:

59. Օրենքով սահմանված պարտադիր ներկայացման տեղեկատվությունը Վարկառուն համաձայնում է ստանալ կամ էլեկտրոնային փոստով կամ Պորտալում հրապարակման միջոցով: Վարկառուն սույն Պայմանագիրը ստորագրելով հրաժարվում է Օրենքով սահմանված պարտադիր ներկայացման տեղեկատվությունը փոստային կապով ստանալու իրավունքից:

60. Վարկառուն համաձայնում է, որ Վարկատուն օգտվի իր էլ-փոստից և Հեռախոսահամարից Վարկատուի կամ վերջինիս հետ կապված երրորդ անձանց վերաբերյալ հաղորդագրությունների ուղարկման նպատակով, այդ թվում՝ առևտրային, գովազդային կամ այլ տեղեկատվական բնույթի: Կողմերը հաստատում են, որ Պայմանագրի շրջանակներում Վարկառուին ծանուցումներ կարող են կատարվել Վարկառուի էլ. փոստով և Հեռախոսահամարով հեռախոսազանգի (ձայնագրված բանավոր ծանուցման) կամ տեքստային հաղորդագրություն ուղարկելու միջոցով, ընդ որում էլ. փոստով կամ տեքստային հաղորդագրությամբ ուղարկված ծանուցումը համարվում է ստացված Վարկատուի կողմից Վարկառուին այն ուղարկվելու պահից (ուղարկելու փաստով):

61. Վարկառուն համաձայնում է իր տվյալների մշակմանը (ներառյալ Վարկի դիմումի ստացման պահից) և թույլ է տալիս Վարկատուին երրորդ անձանցից ձեռք բերել և նրանց հանձնել իր և Պայմանագրի վերաբերյալ տեղեկություններ, ներառյալ՝ վարկային բյուրոյի տվյալներ, Վարկառուի պարտավորությունները պարզելու և նրա վճարունակության ստուգման նպատակով:

62. Եթե Կողմերի միջև ծագած վեճը չի լուծվում բանակցությունների միջոցով, ապա այն լուծվում է դատարանի կողմից օրենքով սահմանված կարգով: Վարկառուն իրավունք ունի նաև դիմել ՀՀ Ֆինանսական համակարգի հաշտարարին՝ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

63. Պայմանագրի Բաժին 2-ի ընդհանուր պայմաններում և Պայմանագրային վճարների գնացուցակում Վարկատուն իրավունք ունի միակողմանի կատարել փոփոխություններ, այդ մասին տեղեկացնելով Վարկառուին՝ Պորտալում հրապարակելու կամ Հեռախոսահամարին հեռախոսազանգի կամ Վարկառուի էլ-փոստին ուղարկելու միջոցով: Նշված փոփոխությունները համարվում են Վարկառուի կողմից ընդունված, երբ Վարկառուն նշված փոփոխությունները

հաստատում է Պորտալի կամ Հեռախոսահամարին հեռախոսազանգի միջոցով, ինչպես նաև բոլոր այն դեպքերում, երբ նշված փոփոխությունների հրապարակումից հետո նոր Հայտ է ներկայացնում:

64. Վարկատուն պատասխանատվություն չի կրում, եթե սույն պայմանագրային դրույթները խախտվել են երրորդ անձանց կողմից իրենց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով:

65. Վարկատուն վերադարձնում է վարկառուին վարկի վճարման գումարը գերազանցող մասը համաձայն վարկառուի գրավոր դիմումի: